

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ԳՎԽԱՐԻԱ. «ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՎԱՍԱՐԱԿՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է՝ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՐՂ Է, ԵՎ ՍԱԿԱՅՆ՝ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ

Նոյեմբերի 26-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գվխարիան, միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստի ավարտին հրավիրված մամուլի ասուլիսում, մամուլում խոսեց համավարակով պայմանավորված երկրում ստեղծված իրավիճակի և կառավարության կողմից, միջգերատեսչական համակարգող խորհրդի կողմից հավանության արժանացած միջոցառումների մասին:



Ինչպես նշեց Գիորգի Գվխարիան, իրավիճակը հեշտ չէ, իրավիճակը բարդ է, բեռնաշրջանակը լինում է ծանր: Մենք ավելի քան մեկ շաբաթ աշխատել ենք որոշակի միջոցառումների մշակման ուղղությամբ: Իհարկե, իրավիճակը հեշտ չէ, իրավիճակը բարդ է, բայց կառավարելի է: Մենք, ինչպես բոլորս օգոստոսից առաջ, մեր քաղաքացիների, բժիշկների, ոստիկանության հետ միասին կարողա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԲՈԼՈՐ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԶԱՂԹԵՑԻՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

10-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿՈՒՆԵՆԱ 90, ԻՍԿ ՄԻԱՅՅԱԼ ԸՆԳԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ՝ 60 ՄԱՆԿԱՏ



Այսպիսով, հոկտեմբերի 31-ին և նոյեմբերի 21-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, 10-րդ գումարման նորընտիր խորհրդարանում «Վրացական երազանքը» կունենա 90 (60-ը՝ համամասնական, 30-ը՝ մեծամասնական), «Ազգային շարժումը»՝ 36, «Եվրոպական Վրաստանը»՝ 5, «Լեւոն», «Ռազմավարությունը՝ շինարար», «Հայրենասերների դաշինքը» և «Գիրչին»՝ 4-ական, «Քաղաքացիները»՝ 2, իսկ «Լեյբորիստական կուսակցությունը»՝ 1 մանդատ:

Ինչպես արդեն հաղորդել ենք, նոյեմբերի 21-ին Վրաստանի 30 ընտրատարածքներից 17-ում անցկացվեցին խորհրդարանական մեծամասնական ընտրություններ: Հիմնական մրցող կողմերը իշխող

«Վրացական երազանք» ու ընդդիմադիր «Միասնական ազգային շարժում» կուսակցության թեկնածուներն էին: Նշենք, որ ընդդիմությունը նախապես զգուշացրել էր, որ չի մասնակցելու ընտրությունների (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

COVID - 19

ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄՆԵՐ, ՈՐՈՒՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԵՆ ՎՐԱՏԱՆՈՒՄ ԱՅՍՈՐՎԱՆԻՉ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՉ

Լուկաուս (համընդհանուր սահմանափակում) չի լինի, բեռն կետային սահմանափակումները կընդլայնվեն ու կխստացվեն: Այդ մասին հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գվխարիան: Նրա խոսքով, միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, նոյեմբերի 28-ից հունվարի 31-ը ներառյալ՝

Երկրի ողջ տարածքով սահմանափակվում է. * Տեղաշարժը ժամը 21:00 - 05:00-ն ինչպես հետիոտնի, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցների համար, ինչպես նաև հասարակական տարածքում գտնվելը, բացառություն է Ամսոնի՝ դեկտեմբերի 31-ի գիշերը և Սուրբ ծննդյան հունվարի 6-ի գիշերը: * Ուղեւորների կանոնավոր միջքաղաքային փոխադրում, այդ թվում՝ երկաթուղով, ավտոբուսով, միկրոավտոբուսով: Ավտոմեքենաների (ներառյալ տաքսիները) համար սահմանափակումներ չկան: * Ռեստորաններն ու սննդի կետերը ամբողջությամբ անցել են առաքման ծառայության: Թույլատրվում է սննդամթերքի (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՄԵՆԱՇՐՋԱՆԱՌՎՈՂ ՀԱՐՉԵՐԸ

ՏՐԱՆՊՈՐՏ ԵՎ ՏԵՐԱՇՐՋԱՆԱՐՈՒՄ
- Սահմանափակվում է, արդյոք, միջքաղաքային երթևեկությունը:
- Այո՛, նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 24-ը, ինչպես նաև հունվարի 3-ից հունվարի 31-ը, սահմանափակվում է երթևեկությունը երթուղային տաքսիներով, ավտոբուսներով (M2 և M3 կատեգորիայի ավտոտրանսպորտային միջոցներով), նաև երկաթուղային, միջքաղաքային տրանսպորտը կգործի դեկտեմբերի 24-

ից մինչև հունվարի 2-ը ներառյալ:
- Թույլատրելի՞ է, արդյոք, մասնավոր ընկերությունների աշխատակիցների համար միջքաղաքային տեղափոխության պարբերական իրականացումը:
- Այո՛, թույլատրելի է:
- Թույլատրելի՞ է, արդյոք, մարդատար ավտոմեքենաներով երթևեկությունը:
- Այո՛, մարդատար ավտոմեքենաներով, այդ թվում՝ տաքսիներով երթևեկությունը թույլատրելի է՝ 05:00-ից

ժամը 21:00-ը, առանց հատուկ թույլտվության:
- Թույլատրելի՞ է, արդյոք, մարդատար ավտոմեքենաներով միջքաղաքային երթևեկությունը:
- Այո՛, մարդատար ավտոմեքենաներով կան տաքսիներով միջքաղաքային երթևեկությունը թույլատրելի է առանց հատուկ թույլտվության:
- Կանգնեցվո՞ւմ է, արդյոք, մունիցիպալային տրանսպորտը:
(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԵՆԱՏԵ ԸՆԴՈՒՆԵՉ ԱՐՅԱՆԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՆՀՐԱԾԵՆՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵՎԸ

Նոյեմբերի 25-ին Ֆրանսիայի Սենատը՝ 305 կողմ, 1 դեմ ձայների հարաբերակցությամբ, ընդունեց բանաձև, որով իշխանություններին կոչ է անում ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը:

Փաստաթղթի հեղինակներից մեկը սենատոր Բրունո Ռետայոն է: Բանաձևում օրենսդիրները «դատապարտում են Ադրբեյջանի ռազմական ագրեսիան, որն իրականացվել է Թուրքիայի կառավարության և վարձկանների աջակցությամբ» և կոչ են անում սեպտեմբերի 27-ին սկսված ռազմական գործողությունների արդյունքում զբաղեցրած տարածքներից դուրս բերել զորքերը:



Հարկ է նշել, որ Սենատի կողմից ընդունված բանաձևը երաշխավորական բնույթ ունի, եւ գործադիր իշխանությունը պարտավոր չէ այն իրականացնել:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՑԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՆԱԶՈՒՄԸ ՄՏՆՈՒՄ Ե ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման անհրաժեշտության մասին» բանաձևի նախագիծն ընդունելու Ֆրանսիայի Սենատի որոշումը պատմական է համարում:

Այս մասին Նիկոլ Փաշինյանը գրել է ֆեյսբուքյան իր էջում: «Ֆրանսիայի Սենատի կայացրած որոշումը պատմական է: Արցախի միջազգային ճանաչումը մտնում է միջազգային օրակարգ»,- գրել է Փաշինյանը:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՐՎԱԾ ԶԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի և Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագունի Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ՝ նոյեմբերի 22-ը հայտարարվեց Հայրենիքի պաշտպանության համար նահատակված շերտների հիշատակի օր:

Այդ օրը Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Սուրբ Տրդատի բաց խորանին կատարված հիշատակի արարողությանը:

Միջոցառմանը Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը հանդես եկավ ոգեկոչման ու հիշատակի խոսքով: Արարողության ավարտին Արմեն Սարգսյանը և Նիկոլ Փաշինյանը գրուցեցին զոհված զինծառայողների ծնողների, զինվորականների ու ազատամարտիկների հետ:

ԳՈՐԾԱՐԻՐ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցանք իրական հավասարակշռություն հաստատել տնտեսության շահերի և մարդու առողջության միջև, պետք է վերադառնալ այդ ցուցանիշներին: Ի՞նչ ունենք աշխարհում:

- Ինչպես գիտեք, աշխարհում համավարակի ռեկորդային աճ կա, հատկապես՝ եվրոպայում: Բոլորս պետք է հասկանանք, որ երբ ես խոսում եմ հավասարակշռության մասին, մեր ընտրությունը միշտ եղել է տնտեսականի հետ հավասարակշռության պահպանումը, ինչը հետագայում հանգեցրել է հարմարվողա-

կանության: Մենք արդյունավետորեն կշարունակենք այս քաղաքականությունն ու այս ռազմավարությունը,- նշեց Գիորգի Գախարիան:


Անդրադառնալով ընտրությունների անցկացման անհրաժեշտության թեմային՝ վարչապետը նշեց, որ այն փաստը, որ մենք ընտրությունները չպետք է հետաձգենք, հաստատվել է ընտրատեղամասեր այցելած քաղաքացիների թվով, ովքեր եկել են քվեարկել են երկրի հետագա ժողովրդավարական զարգացման օգտին:

Գիորգի Գախարիայի խոսքով, երկրորդ ալիքը այն իրադարձությունն էր, որի մասին մենք խոսում էինք հունիսին,

հուլիսին ու օգոստոսին, եւ մենք պատրաստվում էինք դրան:

- Թող ոչ մեկը չասի, որ ընտրությունների հետաձգման դեպքում, կապիտալներից այդ թվերը, որն ունեինք օգոստոսին: Մենք միշտ ասել ենք եւ, այսօր ես կրկնում եմ, երկրորդ ալիքը այն իրադարձությունն էր, որի մասին մենք խոսում էինք հունիսին, հուլիսին ու օգոստոսին, եւ մենք պատրաստվում էինք դրան,- հայտարարել է Գախարիան:

Նրա խոսքով, սեպտեմբերին, համավարակի եւ տնտեսական շահերի հետ մեկտեղ, գործընթացին ներգրավվել է նաեւ երրորդ բաղադրիչը՝ քաղաքական բաղադրիչը:



ԱՄՆ ԶՈ ԲԱՅՊԵՆԸ՝ 80 ՄԻԼԻՈՆ ՉԱՅՆՈՎ, ՊԱՐԶԱՎ ԵՐԿՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՐԸ

NBC հեռուստաալիքի տվյալներով, Բայդենն ԱՄՆ ընտրությունների պատմության մեջ առաջինն է, որը հավաքում է 80 միլիոն 13 հազար 916, հանրապետական նախագահ Դոնալդ Թրամփը՝ 73 մլն 882 հազար 361, մյուս թեկնածուները՝ 2 մլն 867 հազար 746 հազար ծայն՝ միասին վերցրած: Չայների ռեկորդային թիվը, որը տրվել է Բայդենի օգտին, ցույց է տալիս ինչպես ընտրություններին մասնակցության աճը, այնպես էլ՝ բնակչության եւ ընտրողների թվի ընդհանուր աճը: Դրա հետ մեկտեղ, ընտրողների ծայներն ունեն միայն խորհրդանշական նշանակություն: ԱՄՆ-ում նախագահական ընտրությունները որոշվում են նահանգներից քվեատուների թվով, ընդ որում՝ կոնկրետ նահանգում հաղթողը վերցնում է դրա բոլոր քվեատուները: Ըստ նախնական տվյալների, Բայդենը Թրամփին ընտրություններում հաղթել է ոչ թե այն պատճառով, որ ստացել է ընտրողների 6 միլիոնով ավելի ծայն, այլ այն պատճառով, որ ոչ մեծ տարբերությամբ հաղթել է մեծ թվով քվեատուներ ունեցող այնպիսի հանգուցային նահանգներում, ինչպիսիք են Փենսիլվանիան, Ջորջիան եւ Միչիգանը:

ԹՈՒՐՔԻԱ

10 ԱՍՏՈՒՄ ԿՈՐՑՐԵԼ Է ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ 70 ՏՈԿՈՍԸ

Թուրքիայում օտարերկրացի զբոսաշրջիկների թիվը 2020 թվականի առաջին տասնամյակներին կրճատվել է 72,5 տոկոսով: Ընթացիկ տարվա հունվարից հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում Թուրքիան ընդունել է 11,2 միլիոն օտարերկրացի զբոսաշրջիկ, ինչը 41 միլիոնով քիչ է 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ:

Օտարերկրացիների ընդամուր թվի 37 տոկոսը բաժին է ընկել Ստամբուլին, որին զբոսաշրջիկների թվով հաջորդում է Անթալիան:

ԵԿՈՆՈՄԻԿԱ

ՕՐԱՎԱՐԳՈՒՄ ԵԿՈՂ ՏԱՐԿԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՈՒ ՀԵՏՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հանդիպմանը քննարկվեցին եկող տարվա մակրոտնտեսական չափորոշիչները եւ հետհամավարակային տնտեսական վերականգնման ճանապարհները:

Հանդիպման օրակարգում համավարակալայնամակրոլված համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետեւանքներն էին Վրաստանի կառավարության տնտեսական ծրագրերն ու քայլերը, որոնք իրականացվելու են բիզնեսին եւ քաղաքացիների կոնկրետ սոցիալական խմբերին աջակցելու:

Հանդիպմանը կողմերը խոսեցին միջ-

նաժամկետ տնտեսական չափանիշների, ինչպես նաեւ հետագա տարիների ընթացքում կառավարության տնտեսական ծրագրի, այդ թվում՝ հաջորդ տարվա պետական բյուջեի ցուցանիշի մասին: Բիզնեսի եւ ֆինանսական հատվածի ներկայացուցիչները նշեցին տնտեսական մարտահրավերները, որոնք նրանք կարելու էր համարում միջնաժամկետ



(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

տնտեսական զարգացման ծրագրում:

ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՋԱԿՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՅԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նոյեմբերի 25-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հերթական աշխատանքային խորհրդակցությունն անցկացրեց կառավարության տնտեսական թիմի եւ առողջապահության նախարարի հետ:

Ինչպես նշվեց հանդիպմանը, Վրաստանի կառավարությունը շարունակում է ինտենսիվ աշխատել սոցիալական օգնության եւ մասնավոր սեկտորի աջակցության միջոցառումների փաթեթի վրա: Կորոնավիրուսի գլոբալ համավարակի երկրորդ ալիքի ու տնտեսական ճգնաժամի պայմաններում ընդգծվեց օժանդակության նպատակայնության անհրաժեշտությունը, եւ այդ կապակցությամբ նշվեց, որ վերջին օրերին կառավարության տնտեսական թիմն ակտիվ հանդիպումներ է ունենում մասնավոր սեկտորի ներկայացուցիչների հետ՝ նրանց հետ

սերտ հաղորդակցելով գալիք միջոցառումների ծրագրման հարցում, որոնք հայտնի կդառնան առաջիկա օրերին:

Նշվեց նաեւ, որ կառավարության կարելու էր խնդիր կետային սահմանափակումներն են, որոնք առաջիկայում կխստանան եւ կընդլայնվեն, լինել որքան հնարավոր է հավասարակշռված՝ հաշվի առնելով նրանց շահերը: Հանդիպման ընթացքում քննարկվել են էկոնոմիկայի ներկա միտումները եւ երկրում ստեղծված բարդ համաճարակային իրավիճակը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՎԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՓԱԹԵԹԸ

Նոյեմբերի 26-ին միջգերատեսչական համակարգող միստի ավարտից հետո, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հանրությանը ներկայացրեց կառավարության մշակած հակաճգնաժամային ծրագրի չորրորդ փուլով նախատեսված սոցիալական աջակցության նոր փաթեթը:

Ստորեւ ներկայացնում ենք աջակցության նոր փաթեթով նախատեսված ծրագիրը:

1. Գոգատարություն քաղաքացիների նկատմամբ. Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 545 միլիոն լարի, դրանից կարող է օգտվել ավելի քան 500 հազար մարդ, ընդ որում՝ այդ գումարում կոմունալ վճարումների սուբսիդավորումը չի նախատեսված:

* Կոմունալ ծախսերի սուբսիդավորում. 4 ամսվա ընթացքում (նոյեմբեր-փետրվարը ներառյալ) կիրականացվի կոմունալ ծախսերի սուբսիդավորում այն ընտանիքներին, որոնք ամսական կապառեն մինչեւ 200 կվ էլեկտրաէներգիա եւ մինչեւ 200 խոր.մ գազ: Պետությունը կփոխհատուցի նաեւ ջրի ու աղբի վարձավճարները՝ 4 ամսվա ընթացքում: Ծրագրի շահառու ընտանիքների մոտավոր թիվը 1 մլն է, ծրագրի բյուջեն՝ 270 մլն լարի:

* 1200 լարիի օգնություն՝ աշխատանքը կորցրած անձանց. ֆորմալ հատվածում աշխատող անձինք, որոնք ժամանակավորապես կկորցնեն իրենց աշխատանքը, 2021 թվականի հունվարից՝ 6 ամսվա ընթացքում կստանան 200-ական լարիի օգնություն: Շահառուների մոտավոր քանակը՝ 125 000 անձ, բյուջեն՝ 150 մլն լարի:

* 300 լարիի միանվագ օգնություն. 300 լարիի միանվագ օգնություն կտրվի այն օբյեկտներում աշխատող անձանց եւ անհատ ձեռներեցներին, որոնց աշխատանքը կդադարեցվի ղեկտեմբերին եւ հունվարին սահմանված լրացուցիչ սահմանափակումների պատճառով: Շահառուների մոտավոր թիվը՝ 100 հազար, բյուջեն՝ 30 մլն լարի:

* 600 լարիի օգնություն. Ընտանիքները, որոնց սոցի-

ալական միավորները 65 000-100 000 է, հունվարից 6 ամսվա ընթացքում կստանան 100-ական լարիի օգնություն (ըստ ընտանիքի անդամների թվի): Շահառուների մոտավոր քանակը՝ 72 հազար ընտանիք, շուրջ 220 հազար անձ, բյուջեն՝ 55 մլն լարի:

* 600 լարիի օգնություն. Ընտանիքները, որոնց սոցիալական միավորները 0-ից մինչեւ 100 000 է եւ ունեն 3 կամ ավելի անչափահաս մինչեւ 16 տարեկան երեխա, 6 ամսվա ընթացքում (հունվար-հունիսը ներառյալ) ամսական կստանան 100 լարիի օգնություն: Շահառուների մոտավոր քանակը՝ 24 հազար ընտանիք, բյուջեն՝ 15 մլն լարի:

* Մինչեւ 18 տարեկան սահմանափակ հնարավորություն ունեցող անձինք 6 ամսվա ընթացքում ամսական կստանան 100 լարիի օգնություն: Շահառուների թիվը՝ 43 հազար անձ, բյուջեն 27 մլն լարի:

* Բանկերում վարկերի հետաձգման հնարավորություն կունենան այն օբյեկտներում աշխատող անձինք, որոնց աշխատանքը կսահմանափակվի ղեկտեմբեր եւ հունվար ամիսներին:

2. Հակաճգնաժամային ծրագրի չորրորդ փուլի համաձայն, բիզնեսի աջակցության փաթեթը կազմում է 515 միլիոն լարի .

* Եկամտահարկի արտոնություն. 2020-2021 թվականի ղեկտեմբեր-մայիս ժամանակահատվածում մինչեւ 1500 լարի աշխատավարձ ունեցող անձինք կազատվեն մինչեւ 750 լարի եկամտահարկից: Շահառուների հավանական թիվը՝ 33 հազար ընկերություն եւ 425 հազար աշխատող:

Բյուջե՝ 260 միլիոն լարի:

* Զբոսաշրջության ոլորտի գույքահարկի արտոնություն . զբոսաշրջության ոլորտը (հյուրանոցներ, ռեստորաններ եւ նմանատիպ գործունեությանը ներգրավված գույք) 2021 թվականին կազատվի գույքահարկից: Բյուջե՝ 45 միլիոն լարի:

* 2020 թվականի չորս ամսվա հետաձգված եկամտահարկի գործառույցում - զբոսաշրջության ոլորտում (հյուրանոցներ, ռեստորաններ եւ նմանատիպ գործունեությանը ներգրավված ընկերություններ) կգործառույցվի մինչեւ 2020 թ. դեկտեմբերի մեկը հետաձգված եկամտահարկը: Բյուջե՝ 20 միլիոն լարի:

Կշարունակվի հյուրանոցների բանկային վարկերի տոկոսների սուբսիդավորումը, ինչպես նաեւ կզործարկվի ռեստորանների բանկային վարկերի տոկոսների սուբսիդավորումը վեց ամսվա ընթացքում: Շահառուների հավանական թիվը՝ 3700 ընկերություն:

Միկրո դրամաշնորհների ծրագիր. Ընթացքի մեջ է ձեռնարկատիրական միկրո դրամաշնորհների ծրագրի իրականացումը հազարավոր նոր բիզնես ծրագրերի ֆինանսավորման համար (2020 թ. ծրագիր): Բյուջե՝ 40 միլիոն լարի:

Վարկերի երաշխավորման հիմնադրամ. 2021թ. ակտիվորեն կշարունակվի վարկերի երաշխավորման հիմնադրամի աշխատանքը, ինչը կօգնի մասնավոր հատվածին՝ առկա վարկերի վերականգնվողման, ինչպես նաեւ նոր միջոցների ներգրավման գործում: Բյուջե՝ 100 միլիոն լարի:

Բանկային վարկերի հետաձգման հնարավորություն կունենան այն ընկերությունները, որոնց գործունեությունը կսահմանափակվի ղեկտեմբեր-հունվար ամիսներին: Ընդհանուր առմամբ, փաթեթի ողջ բյուջեն կկազմի 1,1 միլիարդ լարի:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ


ԱՆԱԼՔԱԼԱՔԻԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՆ ՁԵՌՆԱՍՈՒՄ ԵՂԱՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Ախալքալաքի մունիցիպալիտետի 2021 թվականի բյուջեի նախագիծն արդեն պատրաստ է այն կազմում է 9 257 600 լարի:

Մունիցիպալիտետի սակրեբուլյունը ընթացում են քննարկումներ: Պատգամավորները նախագիծը վերադարձրել են քաղաքապետարան եւ առաջարկել դրանում ներառել նաեւ նախադրոցական տարիքի երեխաներին մանկապարտեզ տեղափոխելու համար նախատեսված ծախսերը, քանի որ բյուջեում երեխաներին մանկապարտեզներ տեղափոխելու

համար միջոցներ չեն հատկացվել: Ըստ ֆինանսա-բյուջետային հանձնաժողովի նախագահ Սեդա Մելքունյանի, մանկապարտեզներն այժմ չեն գործում, բայց հաջորդ տարի դրանք կսկսեն աշխատել: Նշենք, որ մունիցիպալիտետի սակրեբուլոն, վերանայման նպատակով, քաղաքապետարան է վերադարձրել 2020 թվականի բյուջեի փոփոխությունների

փաթեթը՝ նշելով, որ Ամանորյա տոների ծախսերում անհրաժեշտ է գումարային կրճատումներ իրականացնել: Նախատեսված է 14 100 լարի գումար՝ քաղաքի ամանորյա լուսավորության, քաղցրավենիքի եւ հրավառության ձեռքբերման համար: Պատգամավորները չհամաձայնեցին գումարի հատկացմանը եւ փոփոխությունների փաթեթը հետ ուղարկեցին վերանայման, առաջարկելով նշել միայն ամենամանրամասն ծախսերը: Այդ մասին տեղեկացնում է JNEWS-ը:



ՆՆՇՎԵՑ ԳԻՈՐԳՈՒՄ

Նոյեմբերի 23-ին Վրաստանի Ուղղափառ եկեղեցին նշեց Սուրբ Գիորգիին անվի վրա կտտանքների ենթարկելու օրը: Այդ օրը երկրի գործող բոլոր եկեղեցիներում ու վանքերում մատուցվեց տոնական պատարագ:



Սուրբ Երրորդություն Մայր տաճարում պատարագն անցկացրեց պատրիարքական գահի փոխանորդ Շիոն:

Նշենք, որ Վրաց Ուղղափառ եկեղեցին Գիորգոբան նշում է տարին երկու անգամ. մայիսի 6-ին՝ Սուրբ Գիորգիի նահատակության եւ Նոյեմբերի 23-ին՝ նրան անվի վրա կտտանքների ենթարկելու օրը:

ՎՐԱՍԱՆԸ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՊՐՈՒՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ռուսաստանի Դաշնության եւ Վրաստանի կողմից չվերահսկվող Աբխազիայի միջեւ միասնական սոցիալական ու տնտեսական հարթակի ձեւավորման մասին ծրագրի հաստատումը անբնական ուղղությամբ արված էս մեկ ապօրինի քայլ է, որը նպատակ ունի Վրաստանի շրջանների փուլ առ փուլ ինտեգրում իրականացնել Ռուսաստանի ռազմական, քաղաքական, տնտեսական եւ սոցիալական համակարգում»:

Այս մասին ասված է Վրաստանի արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ, որը գերատեսչությունը տարածում է՝ կապված Ռուսաստանի Դաշնության եւ Վրաստանի կողմից չվերահսկվող Աբխազիայի տարածաշրջանի միջեւ սոցիալական ու տնտեսական հարթակի ձեւավորելու ծրագրի հաստատման հետ:



ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՐԱՅՏՎԵԼ ԵՆ ԱՌԱՆՑ ԱՊՐԱՆՔԱԳՐԻ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՓԱՍՏԵՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի, մոնիթորինգի վարչության արեւելյան բաժնի աշխատակիցների կողմից Նոյեմբերի 20-ին Մցխեթայի շրջանի Նատախտարի գյուղում ապրանքների ապրանքագրերի մոնիթորինգի նպատակով, իրականացված միջոցառումների արդյունքում, հայտնաբերվել է արտադրական գործունեության համար նա-

խատեսված առանց ապրանքագրի ապրանքի, ընդհանուր առմամբ, 45 խոր.մ անտառանյութի (նախնական վերամշակման արտադրանք, սղոցած փայտանյութ) փոխադրման երկու փաստ: Վրաստանի հարկային օրենսգրքի 228 հոդվածի 32-րդ մասի համաձայն, իրավախախտում թույլ տված անձանց համար սահմանվել է 10 հազար լարիի տուգանք: Չհայտագրված անտառանյութը բռնագրավվել է:



ԱՆՏԱՐԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՍԱՔՄԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ



Գլոբալ համավարակի պայմաններում միջգերատեսչական համակարգող խորհրդի ընդունած որոշումների համաձայն, կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով, ամենօրյա աշխատակարգով շարունակվում է եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի օբյեկտների հատուկ լուծույթով ախտահանման աշխատանքը:

Թով լրիվությամբ վերամշակվեցին ինչպես քաղաքացիների ընդունման տարածքները, այնպես էլ՝ աշխատակիցների սենյակներն ու տեխնիկական միջոցները: Վերոնշյալ օբյեկտները ամբողջովին հագեցած են ախտահանման լուծույթներով, ախտահանչներով եւ ջերմաստիճան սարքերով, իսկ օպերատորները քաղաքացիների ընդունելությունն իրականացնում են պաշտպանիչ դիմակներով եւ Վրաստանի հիվանդությունների վերահսկման կենտրոնի հանձնարարականների պահպանմամբ:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության կողմից, երկրի տարածքով հիվանդությունների վերահսկման կենտրոնի հանձնարարականների նախատեսմամբ, համապատասխան կարգով, վերամշակման գործընթացի նկատմամբ վերահսկողությունն առաջիկայում էլ ակտիվ կշարունակվի:

COVID - 19

ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԿԻՐԱՐԿՎԵՆ ՎՐԱՍԱՆՈՒՄ ԱՅՍՕՐՎԱՆԻՑ՝ ՆՈՅՄԵԲԵՐԻ 28-ԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- քը տանել անձամբ, «takeaway», առաքում, «Drive»:
- * Մարզադահլիճների եւ լողավազանների աշխատանքը:
- * Բոլոր տեսակի գիտաժողովներ, դասընթացներ, մշակութային, ժամանցային միջոցառումներ՝ թույլատրելի է միայն առցանց ձեւաչափով:
- * Սպորտային, արվեստի եւ մշակույթի խմբակների/ստուդիաների գործունեությունը:
- Խոշոր քաղաքներում՝ Թբիլիսիում, Բաթումիում, Քութայիսիում, Ռուսթավիում, Գորիում, Փոթիում, Ջուզղիդիում, Թելավիում եւ Լեռնադահուկային հանգստավայրերում՝ Բակուրիանիում, Գուդաուրիում, Գողերծիում եւ Մեստիայում, կգործեն լրացուցիչ սահմանափակումներ:
- * Թբիլիսիի, Թելավիի, Բաթումիի, Քութայիսիի, Ռուսթավիի, Գորիի, Փոթիի, Ջուզղիդիի վարչական տարածքներում հասարակական տրանսպորտի աշխատանքը:
- * Առեւտրի օբյեկտները (բացառությամբ՝ սննդի, կենդանիների կերի, դեղատների, անասնաբուժական դեղատների, կենցաղային քիմիական նյութերի եւ հիգիենայի խանութների ու մամուլի կրպակների) գործում են միայն հեռավար կարգով:
- * Չեն գործելու բաց եւ փակ տոնավաճառները: Ազրարային շուկաները շարունակում են գործունեությունը:
- * Դպրոցները, մասնագիտական ուսումնարաններն

- ու բարձրագույն ուսումնական հաստատությունները (բացի բժշկական կրթական ծրագրերից) ամբողջությամբ անցնում են հեռավար ուսուցման կարգի:
- * Մասնավոր եւ պետական մանկապարտեզները դադարեցնում են աշխատանքը:
- Լեռնադահուկային հանգստավայրերում.
- * Դուրանոցների աշխատանքը թույլատրվում է միայն կարանտինային տարածքներ կազմակերպելու համար:
- * Նաեւ դադարեցվում է Լեռնադահուկային վազբուղիների եւ դահուկային ճոպանուղիների աշխատանքը:
- Դեկտեմբերի 24-ից հունվարի 2-ը սահմանափակումները մեղմացվում են ողջ երկրի տարածքով:
- * Թույլատրվում է առեւտրի կենտրոնների, բաց եւ փակ տոնավաճառների գործունեությունը:
- * Վերականգնվում է ինչպես քաղաքային, այնպես էլ՝ միջքաղաքային տրանսպորտի աշխատանքը:
- Հունվարի 3-15-ը ողջ երկրի տարածքով՝
- * հայտարարվում են հանգստյան օրեր:
- * Նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 24-ը գործող բոլոր սահմանափակումները վերականգնվում են,
- * չեն գործի պետական կամ մասնավոր հաստատությունները, բացառությամբ՝ բանկերի եւ ռազմավարական նշանակության օբյեկտների ու ծառայությունների:
- Հունվարի 16-ից 31-ը ողջ երկրի տարածքով.
- * վերականգնվելու է քաղաքային եւ միջքաղաքային տրանսպորտի աշխատանքը, առեւտրի օբյեկտներ

- րի եւ բաց ու փակ տոնավաճառների (բացառությամբ շաբաթ-կիրակի օրերի) աշխատանքը,
- * շաբաթ-կիրակի օրերին տրանսպորտը, առեւտրի օբյեկտներն ու տոնավաճառները դադարեցնում են աշխատանքը:
- Նոյեմբերի 28-ից հունվարի 31-ի սահմանափակումները չեն առնչվում.
- * տնտեսական բոլոր մյուս տեսակի գործողություններին,
- 1. պետական եւ մասնավոր շինարարական-վերանորոգման աշխատանքներին,
- 2. բանկային եւ ֆինանսական գործունեությանը,
- 3. սննդամթերքի, կենդանիների կերի, դեղատների, անասնաբուժական դեղատների, կենցաղային քիմիական նյութերի եւ հիգիենայի խանութներին, մամուլի կրպակների աշխատանքին,
- 4. առաքման եւ «անձամբ վերցնելու» ծառայություններին,
- 5. գեղեցկության սրահների եւ էսթետիկ բժշկության կենտրոնների աշխատանքին,
- 6. ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ տեխնիկական զննման ծառայություններին,
- 7. կենցաղային տեխնիկայի վերանորոգման ծառայություններին,
- 8. ազրարային շուկայի գործունեությանը,
- 9. եւ այլն:
- Ավտոմեքենաներով երթեկությունը (ներառյալ տաքսի) չի սահմանափակվում:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԲՈԼՈՐ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԶԱՂԹԵՑԻՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

երկրորդ փուլին, սակայն նրանց անուններն ըստ կարգի տեղ էին գտել քվեաթերթիկներում: Ընտրությունների լուսաբանումը բոլորովին էին նաեւ մի քանի լրատվամիջոցներ, սոցիալական ցանցերում փորձագետներն ու մեծ լսարաններով հանրային որոշ անձինք կոչ

էին անում չմասնակցել ընտրություններին: Այդուհանդերձ, ընտրությունները կայացան: Եվ այդ տարածքներում, ինչպես նաեւ հոկտեմբերի 31-ին անցկացված խորհրդարանական ընտրություններում, 13 ընտրատարածքներում հաղթեցին «Վրացական երազանքի» թեկնածուները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պար-

զաբանմամբ, չնայած ԿԸԳ-ի կայքում ընտրությունների երկրորդ փուլի արդյունքների հրապարակման ընթացքում տեխնիկական թերություններից, վարչակազմը ժամանակին արձագանքել է, եւ արդյունքները հնարավորինս շուտ հասանելի դարձրել: ԿԸԳ-ն նշել է նաեւ, որ թերությունների առաջացման պատճառները ճշտվում են:

«ՇՆՈՐՀՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՎՐԱՍԱՆԻՆ, ՈՐԻՆ ԶԱԶՈՂԿԵՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐԴ ԶԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ»

Պոկտեմբերի 31-ին եւ նոյեմբերի 21-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների առաջին եւ երկրորդ փուլերում դիտորդական առաքելությունն իրականացրող միջազգային կազմակերպություններն իրենց հայտարարություններում ընդգծում են ընտրությունների համապատասխանությունը ժողովրդավարական սկզբունքներին: Եզրահանգումներում նշված է նաեւ, որ նախընտրական քարոզարշավն անցկացվել էր խոսքի, արտահայտվելու ազատության, մրցակցային հավասար պայմանների, թափանցիկության միջավայրում:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական ասամբլեայի (PACE) համագեկուցողներ, Վրաստանի մոնիթորինգի հարցերով պատասխանատու Տիտուս Կորլատեանը (Ռուսիան) եւ Կլոդ Կերնը (Ֆրանսիա), բոլոր քաղաքական կուսակցություններին կոչ են անում զբաղեցնել իրենց տեղերը նորընտիր խորհրդարանում:

Միաժամանակ, հայտարարության մեջ ասված է, որ խախտումների հետ կապված մեղադրանքները լուրջ վրդովմունք են առաջացնում:

«Մենք լիովին աջակցում ենք ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության կողմից տրված եզրակացություններին ու զնահատականներին: Միաժամանակ, մենք նկատել ենք խախտումների լուրջ քանակ, այդ թվում՝ մշտական մեղադրանքներ ընտրական թվերի սխալ լինելու հետ կապված, վարչական ռեսուրսների չարաշահում ու ճնշում ընտրողների ու կուսակցությունների վրա: Այս մեղադրանքները լուրջ վրդովմունք

են առաջացնում, եւ պատասխանատու մարմինները պետք է այս ամենը թափանցիկ հետաքննության ենթարկեն», - ասված է հայտարարության մեջ:

Եվրախորհրդարանի ներկայացուցիչները դիմել են վրաստանյան ընդդիմադիր ուժերին՝ ժողովրդավարական ընտրությունը հարգելու ու ընդհանուր հայտարարի գալու կոչով:

Նամակը ստորագրել են Եվրախորհրդարանի արտաքին գործերի հանձնաժողովի ղեկավար Դեյվիդ Մաքքալիստերը, Գերմանիայի Կոմկասի հետ հարաբերությունների պատվիրակության ղեկավար Մարինա Կալիուրանդը, Վրաստանի հարցերի զեկուցող Սվեն Միքսերն ու Եվրախորհրդարանում Վրաստանում ժողովրդավարական ակտիվության առաջատար աջակից Վիոլա Ֆոն Կրամոնը:

Ինչպես նշված է նամակում, նրանք կիսուն են ԵԱԳ-ի խորհրդարանական վեհաժողովի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի, NATO-ի խորհրդարանական վեհաժողովի եւ դիվանա-

գիտական ծառայության զնահատակաւոր՝ կապված առաջին փուլի հետ: Միաժամանակ, երկրորդ փուլից հետո, նրանք բոլորը հիմնարար, թափանցիկ ու մանրամասն քննարկման են սպասում:

«Եվս մեկ անգամ ցանկանում ենք շնորհավորել Վրաստանին՝ որպես եվրամիության կարեւոր դաշնակից, որին հաջողվեց կազմակերպել այս ընտրությունները բարդ համավարակաբանական իրավիճակում», - այս մասին ասված է Վրաստանի խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ չորս եվրախորհրդարանային համատեղ հայտարարության մեջ:

Նշում են նաեւ, որ աջակցում են ԵԱԳ / ՕԴԻՐ-ի, ԵԱԳ-ի խորհրդարանական վեհաժողովի, Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի եւ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի զնահատակաւոր եւ Եվրամիության դիվանագիտական ծառայության կողմից հրապարակված առաջին փուլի արձագանքին:

Դրա հետ մեկտեղ, հայտարարությունը ստորագրողները նշում են, որ մնացած թերությունները պետք է վերացվեն նոր ընտրական բարեփոխումների միջոցով:

«Եվրախորհրդարանը պատրաստ է լրացուցիչ օժանդակության, այդ թվում՝ խորհրդարանական, ընտրական երկխոսության եւ Վրաստանի քաղաքական ուժերի միջնորդության ճանապար-

հով, որը նպատակ ունի կատարելագործել օրենսդրությունը հաջորդ ընտրությունների համար:

Կոչ ենք անում բոլոր քաղաքական խաղացողներին, ցուցաբերել պատասխանատվություն, զսպվածություն եւ հստակություն, հարգեն ընտրողների ժողովրդավարական ընտրությունն ու գտնել անհրաժեշտ փոխզիջում, մասնավորապես նոր երկխոսության ճանապարհով, որի ֆասիլիտատորները Վրաստանում Եվրամիության երկրների եւ ԱՄՆ-ի դեսպաններն են, որպեսզի ապահովվի խորհրդարանի անխափան գործունեությունը, քանի որ այն ժողովրդավարության համար կենսական նշանակություն ունեցող ինստիտուտ է: Խորհրդարանում ներկայացված բոլոր քաղաքական ուժերը պետք է կառուցողական աշխատեն եւ հաշվի առնեն Վրաստանի կողմից ընտրված Եվրոպական ուղու հիմնական շահերը», - ասված է հայտարարության մեջ, որը ստորագրում են Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Դեյվիդ Մաքքալիստերը, Եվրախորհրդարանում Գերմանիայի Կոմկասի հետ հարաբերությունների պատվիրակության նախագահ Մարինա Կալիուրանդը, Եվրախորհրդարանում Վրաստանի հարցով համագեկուցող Սվեն Միքսերը, Եվրախորհրդարանային Վիոլա Փոն Կրամոնը:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԲՈՅՎՈՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՆՉՊԻՍԻՆ ԿԼԻՆԻ 10-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Պոկտեմբերի 31-ի եւ նոյեմբերի 21-ի խորհրդարանական ընտրությունների երկու փուլերի արդյունքներով, նորընտիր 10-րդ գումարման խորհրդարանում «Վրացական երազանքը» կուսնեա 90, իսկ մեկ տոկոսի ընտրաշեմը հաղթահարած մյուս ութ կուսակցությունները՝ 60 պատգամավորական մանդատ:



նական արդյունքները հայտարարելուց առկա 10 օրվա ընթացքում: Այն բացելու է երկրի նախագահը: Նորընտիր խորհրդարանը լիարժեք իրավասություններ կստանա միայն այն դեպքում, եթե հաստատվեն խորհրդարանի ամբողջ կազմի 2/3-ի, այսինքն՝ 100 պատգամավորի իրավասությունները:

Բայցեւայնպես, իր տնօրինության տակ 90 պատգամավորական մանդատ ունեցող «Վրացական երազանքը» ի՞նչ հարցեր կկարողանա քննարկել եւ ո՞ր հարցերը, նման պարագայում քննարկման ենթակա չեն:

Միանգամից նշենք, որ իր 90 մանդատով «երազանքը» միաձայն չի կարող փոփոխություն կատարել սահմանադրությունում, նախագահին իմպիչմենտ հայտարարել, տարածքային ամբողջականության հետ կապված սահմանադրական օրենք ընդունել, գյուղատնտեսական հողերի հետ կապված օրենք ընդունել, պետության տարածքային ամբողջականության կամ պետական սահմանի փոփոխության մասին օրենք փոփոխել կամ չեղարկել:

Ինչ վերաբերում է նորմատիվ ակտերին, ապա դրանց ընդունման համար բավարար է միստին ներկա խորհրդականների մեծամասնության աջակցությունը (ոչ պակաս, քան 50), իսկ սահմանադրական օրենքի համար հարկավոր է խորհրդարանականների մեծամասնության համաձայնությունը (76 պատգամավոր):

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՆ ՄԱՆՎԱՏՆԵՐԻՑ, ԱՊԱ ԻՆՉՈՒՐ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, ընտրությունների արդյունքներով, ընտրաշեմը հաղթահարած կուսակցությունները, ըստ օրենքի, կարող են հավակնել բյուջետային ֆինանսավորման, որի չափերը պայմանավորված են այդ կուսակցությունների կողմից ստացված քվեների քանակությամբ:

Պոկտեմբերի 31-ի ընտրությունների արդյունքներով, ընտրաշեմը հաղթահարել են ինը քաղաքական սուբյեկտներ՝ «Վրացական երազանքը» (48,23 տոկոս), «Միասնական ազգային շարժում» - Միացյալ ընդդիմությունը» (27,17 տոկոս), «Եվրոպական Վրաստանը» (3,79 տոկոս), «Լեյզն» (3,15 տոկոս), «Չայրենասերների պլանսը» (3,14 տոկոս), «Ռազմավարությունը չինարար» (3,15 տոկոս), «Գիրչին» (2,89 տոկոս), «Ալիկո Էլիաշվիլի-քաղաքացիներ» (1,32 տոկոս) եւ «Լեյբորիստական կուսակցությունը» (1 տոկոս) եվ բոլորն էլ բյուջետային ֆինանսավորման ստանալու համար դիմել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Օրինաչափ հարց է ծագում. եթե հրաժարվում եք ընտրությունների արդյունքները ճանաչելու եւ ստացած մանդատներից, ապա ի՞նչ բարոյական իրավունք ունեք ստանալ բյուջետային ֆինանսավորում:

«Գիրչին» ղեկավար Ջուրաբ Ջափարիձեի խոսքով, հարցն ավելի քան տրամաբանական է, քանի որ բյուջետային ֆինանսավորում ստանալու համար, ԿԸԳ-ին դիմումը, ընտրությունների արդյունքների անուղղակի օրինականացում է: Ըստ նրա, բյուջետային ֆինանսավորումը վերցնելը եւ խորհրդարանին բյուջոտ հայտարարելն անհամատեղելի են:

- Բոլորտեղ՝ նշանակում է ամեն ինչից հրաժարվել ու հեռանալ երազանքներից: Այդ թվում՝ ոչ միայն բյուջետային ֆինանսավորման մերժելը, այլ նաեւ իր անդամներին բոլոր ընտրված մարմիններից դուրս բերելը: Ես խորհրդարան չեմ մտնում, սակայն աշխատում եմ Զխորոժողուի քաղաքային խորհրդում, նվազագույնը ծիծաղելի է, - նշել է Ջուրաբ Ջափարիձե:

«Քաղաքացիների» ղեկավար Ալեկո Էլիաշվիլին էս հակատրամաբանական է համարում բյուջոտի պայմաններում բյուջետային ֆինանսավորման հավակնումը:

- Ինձ համար դա մի փոքր տարօրինակ է թվում: Գիշտն ասած, մի կողմից բյուջոտ հայտարարելը, իսկ մյուս կողմից ֆինանսավորման հայտ լրացնելը, շատ անհասկանալի է, եւ դա հենց այն է, ինչը մեզ առանձնացնում է մյուսներից: Մենք չենք փոխում այս բյուջոտը, սակայն հուսով ենք, որ ձեռք կբերվի պայմանավորվածություն, «Վրացական երազանքը» ողջամիտ քայլեր կծեռնարկի իրավիճակը լիցքաթափելու համար, այնուհետեւ թող լինի, սակայն հիմա մենք ասում ենք, որ բյուջոտելու ենք, եւ դա շատ տարօրինակ է: Գիշտն ասած, դրա մասին առաջին անգամ ես լսում ձեզանից, - հայտարարել է Ալեկո Էլիաշվիլին:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ